VIII

ՄՈՎՍԵՍ ԱՐԾԿԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XV Դ.)

Սույն տարեգրությունը պատկանում է Մովսես Արծկեցու գրչին, որի կենսագրությունից մեզ ոչինչ հայտնի չէ։ 1472 թվին, Արծկե քաղաքում, ընդօրինակված գանձարանի չափածո հիշատակարանից իմանում ենք, որ նա ապրել է XV դարում և նրա ծնողները եղել են Դանիել քահանան ու Խայխաթունը[1]։

Մ. Արծկեցու տարեգրության մասին, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ հիշատակության հանդիպում ենք Խաչիկ Դաղյանի ձեռագրերի ցուցակում[2], որտեղ բերված է Ղ. Փիրղալեմյանի անտիպ աշխատությունների ցանկը։ Մի փոքր ավելի ուշ, Ալիշանը հայ մատենագիրների շարքում հիշում է Մ. Արծկեցուն, հայտնելով, որ նա «...ոտանաւոր բանիւ գրեր է Ճիհան Շահի և Ուզուն Հասանայ իրարու հետ պատերազմիլն 1467—73 տարիներում»[3]։

Կարծում ենք, Ալիշանը նկատի է ունեցել Հ. Թովչլանի վերոհիշյալ տեղեկությունը, իսկ տարեգրությունը նրա ձեռքի տակ չի գտնվել[4]։

Մ. Արծկեցու մատենագրական այլ գործերից մեզ ոչինչ հայտնի չէ։ Փիրղալեմյանի «Նշխարք պատմութեան Հայոց» անտիպ աշխատության մեջ[5] մեզ հանդիպեց նրա միայն վերոհիշյալ չափածո հիշատակարանը և առաջարկվող տարեգրությունը։ Վերջինս 160 տողից (40 տուն) բաղկացած չափածո մի պատմություն է, գրված ութոտնյա չափով։

Այս տարեգրությունն ընդգրկում է չուրջ յոթ տարվա, 1467—1473 թթ., մեծ մասամբ Հայաստանում տեղի ունեցած ասպատակությունների, ավերումների և տառապանքների տխուր պատմությունը, ժամանակակից անձնավորության կողմից նկարագրված։ Այս ընագիրը լինելով չափածո ստեղծագործություն, գրական տեսակետից առանձին արժեք չի ներկայացնում, մինչդեռ, որպես պատմական սկզբնաղբյուր, բովանդակալից է ու ստուգապատում։ Տարեգրությունը պարունակում է ոչ միայն տեղի ունեցած մի շարք դեպքերի ստույգ տարեթվերը, այլև այդ դեպքերի որոշ մանրամասնությունները՝ Ջհանշահի և ապա նրա որդու՝ Հասան Ալիի կոիվները Հասան բեկի հետ և այլն։

---

[1] Ձեռ. № 4515, էջ 200։

[2] Ց. Թոփճեան, «Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի», մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 59։

[3] «Հայապատում», Ա, էջ 127։

[4] Նույն տեղ, էջ 128, հմմտ. Թովմա Մինասեանցու մասին եղած հաղորդման հետ։

[5] Ձեռ. № 4515, էջ 206—208։

Տարեգրության ընագիրը ժամանակին գտնվել է Բաղեշի Ամրդոլու վանքի մի ձեռագիր գանձարանի մեջ, որը եղել է հեղինակի ինքնագիր օրինակը։ Տարեգրությունը, ինչպես և հիշատակարանը, 1881 թ. հուլիսի 9-ին ընդօրինակել է Ղ. Փիրղալեմյանը «Նշխարք պատմութեան Հայոց» իր անտիպ աշխատության Բ հատորում։ Հրատարակությունը կատարում ենք այստեղից։

VIII

Յիննհարիւր Հայոց թուական 206
ընդ որ ԺԶ այլ յաւելան (ՋԺԶ 1467),
այն մեծ արքայն արեւելեան
խաղաղարարըն Ջըհանշայն,
Ցամէն գիմաց եհան հրաման,
որ զօրք բաղում ժողովեցան
և էջ նոքօք յԱսորեստան
առ ի յաղթել զմիր Հասանն[1]։
Իսկ Հասան բէկ քաջ փահլաւանն
զօրօքն իւրով որ գումարան.
ի քուն եգիտ ըզՋըհանշայն
զօրացն ի զատ անպահապան.
Որ և սպան անդէն ըզայն
և զՄուհամատ որդի նորայն.[2]
Իսկ չար հեծեալքն որ յետ դարձան
առին[3] բաղում առ և թախթան[4]։
Հասան Ալին այն չար գազանն,
որ ի Մակու էր ի զընդան,[5]
ելեալ գնաց դէպ ի Ղափան
և կոտորեաց զհաղինայն.
Այնչափ երեւ պարգևս մարդկան, 207
վասն այն բաղումք ժողովեցան[6],
քան զերկերիւրըն հազարեան,
այլ աւելի անդ գումարան[7]։
Իսկ ի գալ միւսուն ամեան, (ՋԺԷ 1468)
Ազգոյլուցիքըն[8] զօրացան,
ելին յաշխարհըն Հայաստան
մինչ յԾրասխայ յափըն հասան[9]։
Հասան Ալին հեզ յիմարն այն
մըտեալ նըստաւ ի կարճ մէջայն,
զոր զօրքն անդէն ապստամբեան
ւ ի թշնամիքն եկեալ խառնան[10],
Հասան Ալեանքըն զարհուրան
ւ ի բանակէն ելեալ փախեան,
զոր և եկեալ սուլտան Հասանն,
Մնացեալքն անթիւ հնազանդեցան.

Նստեալ ի թաղթըն Շահաստան
դաշխարհս էած իւրն ի հաւան.
երկիր բոլոր խաղաղացան
որպէս ի մօր գիրկըն տըղայն։
Հասան Ալին իւրքն ամենայն
վախեալ հասին ի Զաղաթայն,
զԲուսայիտն առեալ եկան[11]
և զքառասուն որդին լըման.
Եկեալ զօրօք գումարեցան,
վասըն կըռուոյ և բարկութեան,
Հասան Ալիքըն միարան
ի մէջ նոցա ալա դարձան։
Յերեկոյին յորժամ Հասան
որ և զամբարք նոցա լուցան,
ելեալ զիրեարրս խառնեցան
ոմանք սպանան և այլք վախեան.
Իսկ Հասան ըէկըն ջաջ արքայն,
որ այսք վասն իւր ներգործեցան,
եկեալ բարուք խաղաղութեան
յաւար էառ զրանակ նոցայն։
Զբուսայիտն անդէն էսպան
և զայլս յորգոցն որք ըմրոնան,
զՀասան Ալին զանբաղդըն զայն
զորդին և զայլքրն զամենայն.
Հասան Ալին անդօլվաթն այն,
եկեղեցի շինեաց զՄակուայն,
որոյ անուն սուրբ Վարդան
և նա չեղև իւրն օգնական
կամօք վերինն հայրական։
Իսկ Աղզոյլուքըն քաջացան
և զԻարելոն առեալ կալան,
մինչ յԱմռսան գնացեալ հասան,
որ և ըստոյդ է Խորասան[12].
Իսկ յանցանելն երրորդ ամեան (ՋԺԹ 1470)
որ և զթաղթն ինքեանք կալան,
Հասան փատշահըն մեծ սուլտան
զօրս առաքեաց ի Քըրդաստան.
Մեծ զօրավարըն Սուլէյման[13]
զօրօք հասեալ գաղտագողեան,
քաջ պաշարեաց զնոսա այնքան,
որ մեծ զարմանք ըզմեզ կալան։
Իսկ ի յերկու ամսին լըրման
չէկած անդէն ըէկ Սուլէյմանն,
քանզի Քըրդերըն զօրացան[14]
կորուսանել զնա կամեցան.

Զոր երկուցեալ ի յետ դարձան
ւ ի Վան քաղաք ձըմրոնեցան,
իսկ Քուրդն արար զդախիրայն՝
բաղում ընչից պատրաստութեան։
Դարձեալ ի գալ միուսն ամեան,
և թվական Հայ զարմեան,
ինքն հարիւր էր և քսան (ՋԻ 1471)
կրկին նոքա անդէն դարձան.
Ի Մուշ գնաց Խալիլ[15] իշխանն,
և ի Բազէշ քաջ Սուլէյմանն,
և Բայանդուռ Ղօչի միրզայն
կալաւ զրոլոր Խլաթայ թումանն։
Երբ յաւելաւ կրկին թվական (ՋԻԱ 1472)
Քըրդեր ըերդին Կալահոքեան[16] 208
յաւուրս պահոց աղուհացեան,
որ էր Տաճկացն ըոմադան[17]
Եկեալ ի Մուշ չար խորհրդեամբ,
առ ի յաղթել զԽալիլ իշխանն
և զքրիստոնեայքն զամենայն
տանջել չարեօք զանազանեան։
Իսկ թադաւորըն Տարօնեան
և խնամատարն աղանց համայն
մեծ Կարապետըն բանին ձայն,
որ մկրտեաց զտէրն Վորդանան,
Եհաը վանեաց զԲրիմաղայն
և զզօրս նորա զամենեսեան,
զի շատք ի ձիւնըն մըսեցան
ւ այլքըն սրրոյ ճարակ եղան։
Իսկ Բայանդուռ Ղօչ ամիրայն
Նրզմեալ ըզբերդըն Խլաթայն
երբ վեց ամիսըն լըմնեցան
էառ զԽլաթ[18] և զԲլիճան[19].
Փակեաց ըզբերդըն Խլաթայն
և զպահողքն ըզբերդին այն.
արար խըրեանըն զօրական
և ելեալ էջ ի Ջըզիրայն[20]։
Քանզի Քըրդերն երկրին Բուխտան[21]
ելեալ գնացին ի Ջըզիրայն.
զԹուրքերն որ անդ սպանին համայն.
ւ ինքեանք ըզբերդն առեալ նոտան։
ԶԲայանդուռի ձայնն երբ լըսան
նոքա կըռուս պատրաստեցան.
և երբ ըոազմն կազմեցան
նոքա վանեալ հարեալ լըքան։
Կէսքըն սրով սատակեցան
և կէսքն ի դետըն խեղդեցան.

Բայանդուռն առ զըՋըզըրայն
և եօթն բերդն յերկրին Բուխտան։
Եկն ի գաւառն Բըղնունեան,
որ Արծկէ յորջորջի այն.
բերել ըղջուրըն Ծըոգետեան[22]
Պէշնագոմեր[23] դեղջին միայն։
Ի ԺԵ (15) յուլիս ամսեան
Եհան ըղջուրըն Ջամըըղկեան[24]
յԳ (3) աւուրն յետոյ հատեան.
և սուրը Խաչին[25] կըկին բըղխան։
Իսկ Հասան բէկ արի արքայն
զԹաղթըն առեալ զՇիրազայն.
յորդին իւր Խալիլ սուլթան[26]
պահել զկողմանս արևելեան։
Եւ դարձաւ ինքն յԱսորեստան
եկն ի գաւառըն Տարօնեան
զբերդըն քակեաց ի խոր հիման
նըւէրս երետ վանաց Գլակայն։
Զօրս առաքեաց ի Հռոմաց տան
քաղաքըն մեծ Թողաթ հասան,
ոսկի, արծաթ եղև թաղթան
կումաշն ամէն հրով կիզան[27]։
Իսկ փատշահն էջ ի Շամայ տանն.
Հալապ քաղաքըն շահաստան
քաղաքացիքըն չհնազանդեցան[28].....
ԶԲաղէշ զշինուածն Աղեքսանդրեան,
զոր պաշարեալ էր Սուլեյմանն
ամ մի և հինգ ամիս կեցան
որ ԻԲ (ՋԻԲ 1473) աջեաց Թվական[29]։
Քուրդն ետ ըղըբերդն ի Թուրքմանն,
զի ի տեառնէ էր սաստ նոցայն.
Ռ (1000) հոգի ի բերդն ելան և ՋԾ(600) որք անդ նեխան֊
ութ մարդ մնաց և ամիրայն[30]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նկատի ունի Ուզուն Հասանին, նույն ինքը Հասան բեկ։

2. Խանդեմիրի տվյալներով Պետրուշևսկին ցույց է տալիս, որ Ջհանշահի Մուհամեդ որդուն Ուզուն Հասանը գերել է և ապա կախել (տես Сборник статей по истории Азербайджана. вып. I, Баку, 1942 г., стр. 168)։ Մատենագրական մի այլ վկայությամբ Ճապաղջրի ճակատամարտում սպանվել են Ջհանշահի երկու որդիները (տես ՄԺ, 1, էջ 168, տես վերևում, էջ 153)։

3. Բնագրում «ն» տառն ավելացված է հետաղայում, մատիտով։

4. Բնագրում «Թախթան», բառի դիմաց, լուսանցքում, միևնույն ձեռագրով, գրված է «Թալան»։

5. Հասան Ալին Ջհանշահի որդին էր և Նախիջևանի կուսակալը։ Նրա բանտարկության մասին հաղորդում են նաև Անանունը և Հակոբ Հիսուսիին վերագրված ժամանակագրությունը (ՄԺ, 1, էջ 143, 194)։ Հասան Ալու բանտարկության հանգամանքները մեզ հայտնի չեն։ Սակայն, եթե նկատի ունենանք, որ 1458 թվին, երբ նրա հայրը՝ Ջհանշահն, գրաղված էր Խորասանի, Հերաթի նվաճումներով, նա Աղբրեջանում ապստամբություն բարձրացրեց հոր դեմ, և այն Ջհանշահի կողմից ճնշվեց 1459 թվին, ապա կարող ենք եզրակացնել, որ ապստամբության ճնշումից հետո Հասան Ալին հոր կողմից բանտարկվել է Մակու բերդում և այնտեղ մնացել մինչև հոր, Ջհանշահի սպանությունը։ Տես և հմմտ. Петрушевский „Гос-а Азербайджана в XV в." Сборник статей..." выпуск 1, стр. 167).

Կարծում ենք Հասան Ալու ապստամբությանն է վերաբերում 1459 թ. ընդօրինակված մի ձաշոցի հիշատակարանի հետևյալ վկայությունը.

... «և դարձեալ ծանուցանեմք ձեզ դաւեր աշխարհիս մերոյ, որ վասն մեր մեղաց հաս[աւ] Մակու՝ և յաղդմանէ չարին և վասն ծովացեալ մեղաց մերոց, արձակեցաւ ի յերկաթոյն և բաղում աւար արար քաղաքաց և զինչ բռնած կայր հօրն, աղատեաց՝ զՁլիճ Ասլանն, և զորդին իւր զԱրապշէն և զորդին Նորա և ժողովեաց առ ինքն և արար իւր բաղում հեծելս. և յետոյ առաքեաց զՁլճ Ասլանն ի վերայ Վանայ բերդին, զի առցէ զնա և ոչ կարաց։ Ն։ ապա խորհուրդ չար արար, վասն երկրիս մերոյ. և արար չար աւեր և թա[լան] և գնաց ամօթով ի յետս և մնաց երկիրս աւերեալ. բայց մնաց փոքր ի շատէ երկիրն Գաւաշից ի դատարանք և մնաց ի խաղաղութեան Ախթամար... արիութեամբ տէր Զաքարիա կաթողիկոսին» (ՄՏՄ 8, գործ № 23, էջ 89)։ Տե՛ս նաև Ղ. Փիրդալեմյան, Նոտարք հայոց, էջ 193—195, հմմտ. նույն տեղ, էջ 190։

6. Ի. Պետրուշևսկին նշում է, որ Հասան Ալին ցանկանալով իր կողմը գրաւել ադրբեջանական ժողովրդի լայն խավերին, Թավրիզում քաղաքային չքավորությանը և գյուղացիներին բաժանեց դրամական մեծ գումար. („Сборник статей по истории Азербайджана, вып. I, стр. 169)։ Բնագրում խոսքն այդ մասին է։

7. Ուրիշ աղբյուրներ Հասան Ալու զորքի թիվը նշում են 100,000 մարդ (տես վերևում, էջ 153, ՄԺ, 1, էջ 168)։

8. Իմա Ակ-Կոյունլուները։

9. Ուզուն Հասանի սույն նվաճումների մասին ժամանակակից գրիչը այսպես է տեղեկացնում. «...Եւ ի դանութեան Ջհանշի սկսեալ եղև գիրքս և սպանաւ նա ի ձեռաց Հասան բէկի և եկեալ տիրեաց երկրիս մեր և փախոյց զորդի Ջհանշին զՀասան Ալի. և մեր առեալ զդիրքս փախեաք տեղէ ի տեղ և յամենայն ժամ փախուստ և սառանումն գայր և հասանէր ի վերայ և մեր զամենայն արհամարհելով ի բաց ընկեցաք զայս ամենայն, զի մէկ

աարի և վեց ամիս նոյնպէս կայեաք ի վարանի ի գաւառիս Արարատեան ի գեղաքաղաքիս Եղիվարդայ, որ կայ առ ոտս յԱրարատ...։ № 4515, էջ 199։

10. Ուզուն Հասանի և Հասան Ալիի բանակները հանդիպեցին Մարանդում (հարավային Ադրբեջան), 1468 թ. հուլիսի վերջերին (տես Մ, 1, էջ 143, 151, ծանոթ. 33, էջ 168), ուր Հասան Ալին պարտվեց, որից հետո նրա բանակի և Կարա-Կոյունլու ցեղերի նշանակալի մասն անցնում են Հասան-բեկի կողմը („Сборник статей...“ выпуст I, ст. 169).

11. Խոսքը վերաբերում է Լենկ Թեմուրի թոռ և Ջհանշահի դաշնակից Աբու Սեյիդի արշավանքին, որը տեղի ունեցաւ 1468 թ. երկրորդ կեսին։ Այս դեպքերին հատուկ զլուխ է նվիրում Ի. Պետրուշևսկին „Гос-а Азербаиджана в XV в.“ „Сборник статей“ вып. I, էջ 169—171), աշխատության մեջ։ Դեպքերի ժամանակակից Ամբրոսիոս կոնտարինին ևս հիշում է («Ուղեգրություններ» հտ. Ս, 1932, Երևան, էջ 128), տես և հմմտ. նաև Մ, 1, էջ 168։

12. Սկզբում կռիվները Խորասանի համար գնացել են 1469 թ. փոփոխակի հաջողությամբ Շահռուհի սերնդից միրզա Մուհամմեդ Եղիգարի, որին օգնում էր Ուզուն Հասանը և Հուսեյին Բայկարի միջև։ Այս կռիվներում Ուզուն Հասանն իր նպատակին չհասավ. նրա զորքը, ճիշտ է, դնաց Խորասան, միրզա Մուհամմեդ Եղիդարին օգնելու, որի հետևանքով վերջինս վերահաստատվեց Հերաթում, սակայն Ուզուն Հասանի զորքը վերադառնալուց հետո, Հուսեյինը կրկին հարձակվեց միրզա Մուհամմեդ Եղիդարի վրա, նրան պարտության մատնեց, գերեց և ապա սպանեց 1470 թ.։ մանրամասնությունները տես Ի. Պետրուշևսկի „Гос-а Азербайджана в XV в.“ (Сборник статей... вып. I, стр. 174).

13. Խոսքը վերաբերում է Ուզուն Հասանի զորավար Սուլեյման բեկ Բիժան օղլուն, որն Ակ-Կոյունլու տաղանդավոր զորավարներից էր։

14. Բնագրում սխալմամբ գրված է «զօրաղան» ձևով։

15. Ուզուն Հասանի անդրանիկ որդին։

16. Խոսքը վերաբերում է Բաղեշի մոտերքում գտնվող Գելհոզ գյուղին, որին կոչում են նաև Կալհոզ, այս ձևից էլ առաջ է եկել բնագրի «Կալհոզեան» ձևը։

17. Բնագրում այս բառի դիմաց գրված է «ռամազան»։ Այդ դեպքերն ընկնում են 1472 թ. փետրվարի վերջերին։

18. Տես և հմմտ. Մ, 1, էջ 143։

19. Խոսքը, հավանաբար, վերաբերում է պատմական Տուրուբերանի, այժմյան Բուլանրխ գավառի ամենաբարձր Բլեջան լեռան, որը գտնվում է Խլաթից հյուսիս և Խաչու լճից արևմուտք։ Բլեջանը Բուլանրխ գավառը բաժանում է երկու մասի՝ վերին և ներքին։ Բլեջանի արևելյան լանջին ընկած է Հայկաշենը, ոմանք այն նույնացնում են Խարբաշահր գյուղի հետ։ Այս մասին տես Բենսէի ուսումնասիրությունը «Բուլանրխ կամ Հարք գաւառ» (Աղղաղրական Հանդէս, գիրք Ե, 1899 թ., էջ 9—184)։

20. Ջեղիրն, քաղաք Միջագետքում, Տիգրիսի ափին։

21. Բոհտան-սու գետի ավազանի լեռները, որոնք ընկած են Անձևացեաց և Մոկաց գավառների մեջ, կոչվում են Բոհտան լեռներ։ Վինչենցո դ'Ալեսանդրին, որ 1571 թ. անցել էր այս տեղերով, ժողովրդին կոչում է Ջինդի (chinedi) (Ուղեգրություններ», հտ. Ա, էջ 338), դրանով կարծում ենք, նա նկատի ուներ Բոհտան լեռների քրդերին։

22. Հեղինակը, հավանաբար, նկատի ունի Մուշից արևելք, Մեզրագետից մոտավորապես 5 կիլոմետր հարավ Ծոգետ գյուղը, որը մոտ Մեզրագետը թեքվում է հյուսիս-արևմուտք, այդ պատճառով գյուղը կոչվում է Ծոգետ։ Հեղինակը, «Ըղջուրն Ծրոգետան» անվամբ, կարծում ենք, նկատի ունի Մեզրագետը։

23. Այս գյուղը գտնվում է Արծկե գավառում։ № 4882 ձառընտիրի հիշատակարանում, որն ընդօրինակվել է 1491 թ. Արծկե քաղաքում, հիշում է, որ «...ետ զսա (ձառընտիրը—Վ. Հ.) ընծայ և նըւէր ի գեաւղն իւր (ստացողն է տանուտեր պարոն Խալիֆան—Վ. Հ.) Պեշնազոմերն, ի դուռն սրբոյն Գէորգայ...» (էջ 472ա)։

24. Այս անվանը մոտ երկու գյուղի անուն գիտենք՝ մեկը Ամբ կամ Ամպ անունով, Բաղեշից հարավ-արևմուտք, որը նշանավոր է մերձակա ժայռերից բխող սառնորակ ջրով, մյուսը Ջամբեղ անունով, Խոզաղ գյուղաքաղաքի շրջանում (Խարբերդից հյուսիս)։ Այս երկու գյուղն էլ, մասնավորապես վերջինը, հիշված վայրերից բավական հեռու են։ Հավանաբար Արծկե գավառում գտնվել է Ջամբղիկ անունով մի գյուղ և հիշատակությունն էլ վերաբերում է դրան։

25. Այսինքն 1472 թ. սեպտեմբերի 13-ը։

26. Հմմ. Ամբրոսիոս կոնտարինի («Ուղեղրություններ», հտ. Ա, էջ 229)։

27. Այս արշավանքը վերաբերում է 1473 թ. աշնանը Ուզուն Հասանի և Օսմանյան սուլթան Մուհամմեդ II-ի կռիվների առաջին շրջանին (հմմտ. Մխ, 1, էջ 168, Ջենո կատերինո «Ուղեղրություններ», հա. Ա, էջ 165), որի ժամանակ նրանք ավերում են Դերջանը, Երզնկան, Թոխատը և այլ վայրեր։

28. Ղ. Փիրղալեմյանի հաղորդմամբ 4-րդ տողը չկա, հավանաբար բնագրի ինաս-ված լինելու պատճառով։

29. Վերևում մենք տեսանք, որ Սուլեյման բեկ Բիժան օղլին Բաղեշը պաշարել էր 1471 թ.։ Եթե պաշարումը տևել է մի տարի և հինգ ամիս և ապա նոր դրավել այն, նշանակում է, պաշարումը սկսված պիտի լինի 1471 թ. աշնան վերջին կամ ձմռան սկզբին, իսկ դրավումը 1473 թ.։ Սակայն Բաղեշի պաշարման մասին հաղորդում է նաև 1474 թ. ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանը, ըստ որի պաշարումը տևել է մինչև 1474 թ. «Յայսմ ամի յորում Հասան Բաղէշ խըսարեաց և զրաղումս ի Մարաց աղդէն կո-տորեաց և Հայոց աղդիս յոյժ ողորմած է. զի զերի ոչ առնէ...» (№ 216, էջ 205բ)։

30. Մովսես Արծկեցու չափածո տարեգրությունն ընդօրինակելուց հետո Ղ. Փիր-ղալեմյանը գրում է. «Ահա այսչափ միայն էին տարեգրութիւնք Մովսէս քահանայի Արծկեցւոյ, զոր խնամով ընդօրինակեցի յինքնաձեռագիր զանձարանէ նորին ի պէտս տարեգրութեան» (№ 4515, էջ 208)։